ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 721 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 808-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման հավելվածներում «տեղեկատվություն» բառը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինել «տեղեկություն» բառով և դրան համապատասխան հոլովաձևերով.

2) N 2 հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «միջկառավարական» բառը.

3) N 2 հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, իսկ 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող այլ հարցեր».

4) N 2 հավելվածի 6-րդ կետում «Հասարակական» բառը փոխարինել «հասարակական» բառով.

5) N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ներկայացրել են տվյալներ հակակոռուպցիոն ոլորտում իրականացրած առնվազն երեք ծրագրերի վերաբերյալ (առկայության դեպքում՝ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացված ծրագրեր)։ Յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ տեղեկությունը պետք է ներառի դրա բովանդակության նկարագրությունը, իրականացման կոնկրետ ժամանակահատվածը, ինչպես նաև ստացված արդյունքների համապարփակ նկարագրություն։».

6) N 2 հավելվածի 8-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նիստի ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ արձանագրությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում և հակակոռուպցիոն մոնիթորինգի anti-corruption.gov.am պլատֆորմում՝ սույն հավելվածի 10.3-րդ կետով սահմանված կարգով խորհրդի նախագահի կողմից ստորագրվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում».

7) N 2 հավելվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Խորհրդի նիստի ավարտից հետո խորհրդի նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ քարտուղարությունը հինգ աշխատանքային օրվա

ընթացքում կազմում է արձանագրություն, որը կարծիքի է ներկայացվում խորհրդի անդամներին։».

8) N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին, 10.2-րդ և 10.3-րդ կետերով.

«10.1. Խորհրդի անդամները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են դիտարկումներ կամ առաջարկություններ, եթե այդպիսիք առկա են։

10.2. Քարտուղարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված դիտարկումները և առաջարկությունները՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխություններ։

10.3. Խորհրդի նիստի արձանագրության վերաբերյալ սահմանված ժամկետում դիտարկում կամ առաջարկություն չներկայացնելու դեպքում, իսկ առկայության դեպքում՝ դիտարկումների կամ առաջարկությունների հիման վրա լրամշակված արձանագրությունն ստորագրում է խորհրդի նախագահը։».

9) N 2 հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետում «երեք օր» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օր» բառերով.

10) N 2 հավելվածի 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) հանդես է գալիս հայտարարությամբ խորհրդի օրակարգում ներառված հարցերի, հակակոռուպցիոն ռազմավարության և դրանց կատարումն ապահովող գործողությունների ծրագրերի, ինչպես նաև խորհրդի կողմից քննարկվող այլ հարցերի վերաբերյալ.».

11) N 2 հավելվածի 13.1-ին կետում «10-րդ օրը» բառերը փոխարինել «10-րդ աշխատանքային օրը» բառերով.

12) N 2 հավելվածի 14-րդ կետը «կարող են» բառերից առաջ լրացնել «խորհրդակցական ձայնի իրավունքով» բառերով.

13) N 3 հավելվածի 1-ին կետը «հասարակական կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ գործարար ոլորտի շահերը ներկայացնող երկու հասարակական կազմակերպությունների» բառերով.

14) N 3 հավելվածի 3-րդ կետում «10 օր» բառերը փոխարինել «15 աշխատանքային օր» բառերով.

15) N 3 հավելվածի 5-րդ կետում «10 օրվա» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա» բառերով և 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայտերը ներկայացնելու 15 աշխատանքային օրվա ժամկետը նախարարության պատճառաբանված որոշման հիման վրա կարող է երկարաձգվել մինչև 10 աշխատանքային օրով:».

16) N 3 հավելվածի 8-րդ կետը «անձնագրային տվյալները,» բառերից հետո լրացնել «կապը հասարակական կազմակերպության հետ,» բառերով.

17) N 3 հավելվածի 12-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով.

18) N 3 հավելվածի 14-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով, իսկ «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով.

19) N 3 հավելվածի 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու մասին հեռախոսով ծանուցվելու դեպքում կազմվում է գրավոր արձանագրություն:».

20) N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին կետով.

«14.1. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու անհնարինության դեպքում հայտ ներկայացնողը թերությունները շտկելու ժամկետի ավարտից առնվազն երկու աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստով դիմում է ներկայացնում նախարարություն՝ թերությունները շտկելու ժամկետն առավելագույնը հինգ աշխատանքային օրով երկարացնելու խնդրանքով: Նախարարությունը դիմումը քննարկում և կայացնում է դիմումը բավարարելու կամ մերժելու մասին որոշում՝ դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ որոշման մասին էլեկտրոնային փոստով ծանուցելով հայտ ներկայացնող անձին».

21) N 3 հավելվածի 15-րդ կետը «ընթացք չի տրվում» բառերից հետո լրացնել «՝ ժամկետը լրանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կայացնելով համապատասխան որոշում և դրա մասին էլեկտրոնային փոստով ծանուցելով հայտ ներկայացնողին» բառերով.

22) N 3 հավելվածի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են ոչ ավել, քան հինգ հասարակական կազմակերպություններ, ապա այդ կազմակերպությունները փաստաթղթային փուլի արդյունքների հիման վրա ընդգրկվում են խորհրդի կազմում:».

23) N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին, 16.2-րդ և 16.3-րդ կետերով.

«16.1. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են հինգից ավելի հասարակական կազմակերպություններ, ապա անցկացվում է մրցույթի երկրորդ փուլ, որի ժամանակ նախապատվությունը տրվում է հակակոռուպցիոն ոլորտում առավել մեծ փորձառություն ունեցող (վերջին հինգ տարիների ընթացքում առավել շատ ծրագրեր իրականացրած) հինգ կազմակերպություններին:

16.2. Մրցույթի երկրորդ փուլի անցկացման անհրաժեշտության դեպքում կայացվում է համապատասխան որոշում՝ հայտ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

16.3. Եթե առաջին փուլի ընթացքում, ներկայացրած փաստաթղթերում առկա թերությունների շտկման անհրաժեշտությամբ պայմանավորված, հայտ ներկայացնողին տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ սույն կարգի 14-րդ կամ 14.1-ին կետերով սահմանված կարգով, ապա երկրորդ փուլի անցկացման մասին որոշումը կայացվում է վերոնշյալ ժամկետները հաշվի առնելով:».

24) N 3 հավելվածի 17-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով.

25) N 3 հավելվածի 18-րդ կետում «Մինչև ներգրավման նոր գործընթացի ավարտը նրանք շարունակում են պահպանել խորհրդում անդամությունը:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև խորհրդի նոր անդամ հասարակական կազմակերպությունների ներգրավումը խորհրդի գործող անդամ հանդիսացող հասարակական կազմակերպությունները շարունակում են պահպանել խորհրդում անդամությունը:».

26) N 3 հավելվածի 19-կետում «16-րդ կետով» բառերը փոխարինել «16.1-ին, 16.2-րդ և 16.3-րդ կետերով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ